ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 07.07/344
07.07.2015 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գևորգ Կոստանյանին

Պատճենը՝
ՀՀ հատուկ քննչական ծառայության
պետ Վ. Շահինյանին

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2015թ. հուլիսի 6-ի ժամը 12:30-ին ՀՀ ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել էլեկտրաէներգիայի թանկացման դեմ խաղաղ նստացույց իրականացնող ցուցարարներին: Իրականացված գործողությունների արդյունքում ցույցի մասնակիցները ենթարկվել են բռնությունների և անմարդկային վերաբերմունքի:

Մասնավորապես, 2015թ. հուլիսի 6-ին www.aravot.am կայքէջում հրապարակվել է «Ոստիկանական մեքենայում անչափահասի են ծեծել»[1] վերնագիրը կրող նյութը, ըստ որի լրատվական միջոցը գրումը է՝ «Այս անչափահաս տղային ոստիկանները բերման ենթարկելիս ծեծել են»:

«Հարվածում էին ոնց հասցնում էին, իմ մեջքին էին հարվածում, ընկերներիս էլ էին հարվածում, ընկերներիս վրա կան քերծվածքներ: Մի տարիքով մարդ կա ներսում՝ վատացել է, մարդ կա, որի ձեռքն են պատռել՝ արյուն է գալիս» ,-հայտնել է բերման ենթարված անչափահաս Էդուլ Եղիգարյանը»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Ձեր լիազորությունները դիմում եմ Ձեզ համապատասխան միջոցներ ձեռնարկելու Էդուլ Եղիգարյանի կողմից մատնանշած անօրինականություններ թույլ տրված ոստիկանության աշխատակցին (աշխատակիցներին) բացահայտելու և համապատասխան պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

---

1. Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հղումով՝ http://www.aravot.am/2015/07/06/590553/:

Կից ներկայացնում եմ՝

1. www.aravot.am կայքէջում հրապարակված «Ոստիկանական մեքենայում անչափահասի են ծեծել» վերնագրով նյութը,

2. www.aravot.am կայքէջում հրապարակված՝ «Արաբկիրի ոստիկանությունում տարբեր վնասվածքներով անչափահաս ցուցարարներ կան (ֆոտոշարք)» վերնագրով նյութը:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am
հեռ.՝ 0322 4 22 68

Արավոտ (http://www.aravot.am)

15:17 | Հուլիս 6 2015

Ոստիկանական մեքենայում անչափահասի են ծեծել (http://www.aravot.am/2015/07/06/590553/)

Անչափահաս Էդուլ Եդիգարյանը այսօր Արաբկիրի ոստիկանության բաժին բերման ենթարկվածներից է: Նա Aravot.am-ին պատմեց, որ արդեն 10 օր է, ինչ գիշերում է Բաղրամյան պողոտայում:

Նա պատմեց, որ այսօր, երբ լրացավ ցուցարարներին տված ոստիկանության 30 րոպեն, ոստիկաններն անցան կտրուկ գործողությունների եւ բոլորին բռնի ուժով նստեցրին ոստիկանության մեքենաները ու տարան տարբեր բաժիններ:

Այս անչափահաս տղային ոստիկանները բերման ենթարկելիս ծեծել են. «Հարվածում էին ոնց հասցնում էին, իմ մեջքին էին հարվածում, ընկերներիս էլ էին հարվածում, ընկերներիս վրա կան քերծվածքներ: Մի տարիքով մարդ կա ներսում՝ վատացել է, մարդ կա, որի ձեռքն են պատռել՝ արյուն է գալիս»:

Քիչ առաջ ոստիկանության բաժանմունքից հեռացավ շտապօգնության երկրորդ մեքենան, դեռ չենք կարողանում ճշտել՝ արդյոք շտապօգնության մեքենայով ցուցարար տեղափոխվե՞լ է հիվանդանոց, թե ոչ:

Հիշեցնենք, որ արդեն մի ցուցարար շտապօգնության մեքենայով հիվանդանոց է տեղափոխվել:

Արփինե ՍԻՄՈՆՅԱՆ

Համաձայն «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքի՝ լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը: Կայքում լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, նաեւ պարտադիր է կայքի ակտիվ հղումի տեղադրումը:

Արավոտ (http://www.aravot.am)

15:49 | Հուլիս 6 2015

Արաբկիրի ոստիկանությունում տարբեր վնասվածքներով անչափահաս ցուցարարներ կան (ֆոտոշարք) (http://www.aravot.am/2015/07/06/590581/)

Արաբկիրի ոստիկանության բաժնից ազատ են արձակվել 5 անչափահաս ցուցարարներ: Նրանցից 3-ը իրենց մարմնի տարբեր հատվածներում ունեն մարմնական տարբեր վնասվածքներ՝ կապտուկներ, քերծվածքներ եւ ուռածություն:

Նրանք բոլորն էլ պատմում են, որ այդ վնասվածքները ստացել են այսօր Բաղրամյան պողոտայից բերման ենթարկվելու ճանապարհին:

Մանրամասները՝ լուսանկարներում:

Like
105k
Ցոցակ
Ցոհամար
Գոմեր
Ցոհամար
Գոմեր
Ցոհամար
Գոմեր

(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-3.jpg)



(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-2.jpg)

(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-1.jpg)

Արփինե ՍԻՄՈՆՅԱՆ

Համաձայն «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքի՝ լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը: Կայքում լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, նաեւ պարտադիր է կայքի ակտիվ հղումի տեղադրումը:

Հեղինակ Լրագրող
Արփինե ՍԻՄՈՆՅԱՆ
(http://www.aravot.am/author/arpine/)

ՆՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Ոստիկանական մեքենայում անչափահասի են ծեծել (http://www.aravot.am/2015/07/06/590553/)